

ՀԱՅ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԼԵՁՈՒՆ

ՌՈՒՍԱՀԱՅԱՍՏԱՆՌԻՄ

(Շաբ. և վերջ. տես յէջ 174)

ԱՅՍՏԵՂ պէտք է աչքի առաջ ունենալ երկու պայմաններ. մէկը որ օտար լեզուի ազդեցութիւնը ժողովրդից է առաջ գալիս իւր աուրտեպ կեանքի զանազան յարաբերութեանց մէջ. միւսը՝ որ առաջացնում է ժողովրդից գծերս մի որոշ խումբ իւր սեփական շրջանի պահանջների համեմատ, առանց յարմարեցնելու միւս դասակարգի կեանքին։ Առաջին պայմանը բոլորովին կարելի է վերադրել Արդիւտանի աշխարհաբարի առաջնաւուն, որովհետեւ այնտեղ առանց մի որեւիցէ օտար կեանքի մասնակցութեան, ժողովուրդը ինքն էր որ մտցրել էր իւր լեզուի մէջ զրացնների ազդեցութիւնը իւր ամենօրեայ կարեքների համեմատ. այն ինչ մեր այժմեան աշխարհաբարի զարգացումը կարելի է վերադրել երկրորդ պայմանին, որովհետեւ նա դուրս էր բոլորովին ժողովրդի մասնակցութիւնից և հետեւաբար ժողովրդականութիւնից, եթէ աչքի առաջ ունենանք որ լեզուի տարածման մէջ ամենամեծ գործօն տարրը ժողովուրդն է։

Այսպէս էլ ուստահայոց գրականական լեզուն սկսած այն օրից՝ երբ ժողովրդից անջատուած՝ կրեց օտարների ազդեցութիւնը, կամաց կամաց, աննկատելի կերպով հեռանում էր ժողովրդից իւր մի քանի ճիւղերում. և այսօր թէ է ամէն տեղ սկսել են քաղմանալ ժողովրդական զրգերը, հիմուել են զարոցներ, պատրաստուում են երկուստար, կրթուած ուժեր, մի խօսքով թէեւ հայ հասկացող գասակարգը զարմանալի եռանդով կատարում է իւր առաքելական պաշտօնը ժողովրդի մէջ, բայց և այնպէս մեր գրականութեան մէջ մի քանի ճիւղեր, մասնաւորապէս լրագրութիւնը,

զեռ հետ և ժողովրդական անունը կրելուց, որովհետեւ խորթ է նորա համար, ասարեք նրա մտածութեան եղանակից օ Յիբաւի, այն ինչ մեր լրագրական սխալակները լեցուած են ուսական զարնուածքներով, եւրպական բառերով, գաւառներում հայ ժողովուրդը զրթթէ բոլորովին ազատ և առա լեզուի ազդեցութիւնից, և նորա խօսակցութեան ամէն մի նախադասութեան մէջ գերազանցում է զեռ եւս Արդիւտանի աշխարհաբարը։

Այժմ քննելով ժողովրդի և գրականութեան մէջ տեղի ունեցած այս ասարեքութիւնները թիւ պէտք է եզրակացնել. կարճը է մեր աշխարհաբար լեզուն ստանալով վերջի վերջ այն ժողովրդականութիւնը, որ պահանջուում է մի գրական լեզուից. կարճը է նա դառնալ հայ ժողովրդի սեփականութիւնը։ Այլրած լինելով երկար ժամանակ իրօտատաշատանում և մանրամասնաբար դիտելով ժողովրդի վերաբերմունքը դէպ ի գրականութիւնը, ամենայն համոզմունքով կարող ենք գրական պատասխան տալ այս հարցերին։ Այնտեղ հայութիւնը չէ վերաբերում զէպի մասնազրութիւնը այնպիսի դժգոհութեամբ կամ արհամարհանքով, ինչպէս նշմարուում էր սրանից մի քանի տասնեակ տարիներ առաջ, կամ ինչպէս այժմ թուրքահայատանի գաւառներում։ Հայը վճարողաբար իւր գառն նակատազրից հաշմուած, շատ անգամ փոխել է իւր հասարակական գիրքը, նոյն իսկ իւր բնուարութիւնը, բայց միշտ երբ վայելելով ժողովրդային ամենապարզ բնութեան և քաղաքացիական հասարակութեանը մի քիչ տղատ շուն է քաշում, նա եղել է և կը լինի առաջադիմական, սիրող գիտութիւնը, գրականութիւնը ֆրանկալութիւնը միայն առողջ հասարակական կազմակերպութիւնից կարող է ծնիլ. որովհետեւ թիւպէս մի ժողովուրդ պիտի մտածէ ուսմունքների վերայ, հիմնէ սեփական մասնազրութիւն, երբ իւր կեանքի ամենատարբական պահանջները ապահովուած չեն։ Այսպէս էլ երբ կոնկրետ կամաց կամ մաց ընկու իրօտաց զօրեղ իշխանութեան տակ, և երբ հայկական մի մեծ զաղթականութիւն թողած քայքայիչ և ամէն տեսակ մտաւոր կարողութիւն մեղցնող թուրքութիւնը

և հաստատուեցան կոպիտամ, իսկոյն համեմատական ազատութեան մէջ սկսեց ժողկիր այնտեղ հայկական գրականութիւնը մեր արդէն յիշած փոփոխութիւններով և այսօր հայ տարրը իւր մտաւոր կարողութեամբ այնքան բարձր է կանգնած իւր նախորդներէրց, որ բուրորոյին աւելորդ աշխատանք կը լինէր մէջ բերել այստեղ ։ Նա իւր բնաւորութեան համեմատ այժմ հետեւում է մեծ հետաքրքրութեամբ հասարակական հարցերով, սիրում է գրականութիւնը, և եթէ մինչեւ այժմ չէ կարողացել իւրացնել գրական լեզուն, նա պարտական է իւր հարազատութեանը ղէպի հայ միաբը, հայ ոգին, որ մինչեւ այժմ գերազանցող է հանդիսացել զբոյութեան կոտի մէջ ։ Բայց անշուշտ կը զայ մի օր, երբ նա դուրս գալով իւր նահապետական գիրքից՝ կը սփսի մի նոր շրջան, այսինքն ուսու ազդեցութիւնը կը թափանցէ նաեւ նրա խորքը, և այն ժամանակ միայն մեր այժմեան գրականական լեզուն կ'ընդունէ իւր ժողովրդականութիւնը ։

Բայց այս ժողովրդականութիւնը միթէ կարելի է համարել իւր պարծանքը, միթէ որանա՞նք նա կատարած կը լինի իւր գերը առաջադիմութեան պատմութեան մէջ ։ Այլ երբէք Մի գրականութիւն որ դուրս է քաշում ժողովրդին իւր նահապետական գիրքից՝ տանելով նորան ղէպի բարձրը, ղէպի ազնիւր, բայց ոչնչացնելով նորա սեփականութեան ամենակականը, բուրորոյին կերպարանափոխելով նորա ոգին, փոխելով նորա մտածողութեան եղանակը, վերջապէս մի խօսքով հայ միաբը զանելով օտար ազդութեամբ, օր թէ նա կատարած կը լինի մի գեղեցիկ գործ, այլ ուղղակի մի դահնի գեր. որովհետեւ նա մեղցնում է այն՝ ինչ որ մի ազգութեան յատկանիշն է կազմում ։ Մի լեզու ոչ մի գնով չ'պէտք է կորցնէ իւր ինքնուրոյնութիւնը Նա այն սրբութիւնն է մի ժողովրդի համար, որ իրաքանչիւր անձնատուութիւն որ նորա անդամն է կազմում, իւր բարձր պարտականութիւնը պիտի համարէ յանձնայն վրէժնաբարութեամբ պահպանել նախ և առաջ մասը՝ այն է ոգին, և թող չ'տալ վրէժն օր մի օտար ձեռք սպականէ նրան ։

Բայց եթէ իւր զարգացման աստիճանաբարութեան մէջ երբեմն կամ շատ անգամ անհրաժեշտ պահանջ է զգացուում մի միաբ կատարելապէս արտայայտելու համար վերջնել մի ուրիշ լեզուից այն որոշիչ բառը, որ իւր սեփականի մէջ դեռ անգործածական է, թէեւ լեզուաբանական տեսանկից զարձակ անհերել է, բայց մտքի առաջինութեան տեսակէտից նայելով, կրկնում ենք, մեր կարծիքով դա թողարկելի է և նոյն իսկ օգտակար մի որոշ ժամանակ միայն ։ Այսպէս օրինակի համար եթէ մեր աշխարհաբար լեզուի սկզբնաւորութեան եղանակը Ռուսա՛նու յաստանում՝ օգտակար նուաճեցինք, թէեւ օտար լեզուի ազդեցութեան տակ ։ դա բարձրութիւնն է նշանակում որ նայն ազդեցութիւնը պէտք է պահպանել մինչեւ վերջ՝ երբ նոյն իսկ վերացել են նորա սկիզբը դնող պահանջները ։ Մենք գերազանցեցինք օտար լեզուի ազդեցութիւնը՝ այժի առաջ աւելելով միայն մեր ազգային առաջադիմութեան բարձր նպատակը, որի համար մեր աշխարհաբարը դեռ կ'աւ թայլ էր. բայց երբ մեր լեզուն իւր գործածութեան մէջ սկսեց յղիւնել և գրականական զանազան նիւթերում տեղ բռնելով՝ սկսեց ընդարձակել իւր հորիզոնը, այն ժամանակ պէտք էր աշխատել նաեւ թոթափել այն ժանրութիւնը որ մեր ճանապարհի սկզբում անհրաժեշտութեան ստիպումով վերցրել էինք մեզ հետախրոպական բառերի փոխառութիւնը պէտք էր կարելի եղածին շարք քշացնել, որովհետեւ մեր լեզուն սկսում էր ընդունել մի որոշ կազմակերպութիւն՝ և այն ինչ որ գրութիւն չ'ունէր մեր լեզուի բառական կազմութեան մէջ իւր սկզբում, ժամանակը և փորձածութիւնը ասեղծել էին և կատարելագործել ։ Այն ժամանակ մեր գրականութիւնը պահած լինելով իւր լեզուի ինքնուրոյնութիւնը, աւելի շուտով կ'ընդունէր իւր ժողովրդականութիւնը, որովհետեւ ժողովրդը հարազատ էր իւր ասանկին ։ և բայց ի դրանից նա կատարած կը լինէր այն գեղեցիկ գերքը, որ վերապահում է միայն գրականութեանը ։ այսինքն ազնուութեամբ, խղճմանաբար առաջնորդած կը լինէր ժողովրդը ղէպ ի եւրոպական քաղաքակրթութիւնը ։ Այն ։ ամէն անգամ վայր-

կեանք մի առաջադիմող ժողովրդի համար հին և եւ ամէն մի նոր վայրկեան պէտք է բերէ իւր հետ նոր կեանք, բայց այս առաջագիւ մտածեան մէջ երբեք չպէտք է կորցնել այն՝ ինչ որ մեր լեզուի սեփականութիւնն է կառ մեւ, այլ միայն պէտք է մշակել նորան ։ Եւրոպականանանք, բայց հայ մշակով եւրոպականանանք՝ ահա մի քանի խօսքով այն բոլորը, ինչ որ ուզում ենք սասել մեր լեզուի և կեանքի զարգացման վերաբերմամբ ։

Այժմ առաւայտց լրագրութեան մէջ (սրովհետեւ նա է ընդհարապէս՝ որ աարածում է առասական ազդեցութիւնը) նշմած բուում է մի գովելի ջանք մարդկու գրականական լեզուն այն ոճերից, այն մարքերից որ հայկական գրողը չեն կրում, և ճշմարիտ այդ շատ ուրախալի երեւայթ է, որովհետեւ գրանք են սր կերպարանափոխում են կա. տարեւնպէս մի որ եւ. իցէ լեզուն ։ Բայց թէ հայ լրագրութիւնը հասնում է իւր այդ աշխատանքի սպասած ելքին, դա բուական կասկածելի է ։ Պէտք է խոտովանուիլ՝ որ թէ լրագրութեան և թէ գրականութեան զանազան ճիւղերում գործող շատ անձնաւորութիւններ՝ բարբոսի թոյլ լինելով հայերենի մէջ՝ շարունակում են գրել մի այնպիսի լեզուով, որ ոչ մի քանի չէ նմանում, և ընթերցողը ակամայից վայր է ձգում կարգացումը ։ զարմանալով որ այդպիսի մարդիկ համարձակուում են դուրս գալ գրականական տարբ ասպարէզի վերայ՝ կարծես միայն հայ լեզուն կերտուեալու նպատակով ։

Այս մեր ասածը կարող ենք մասնաւորեցըլ նել թարգմանութիւնների վերաբերմամբ, մասնաւոր եթէ կատարուած են առւեղեղեց. նրանցից հարիւրից յիսունը կարելի է դուրս նետել՝ առանց խղճալու աշխատութեան վերայ, որովհետեւ պարզապէս երեւում է որ այնտեղ աշխատութիւն չկայ, այլ միայն բարեունեան խառնակութիւն, առաքանութիւնը միացած կեղտոտ հայերենի հետ ։ Բայց ինչպէս ասացինք՝ գոնէ պէտք է ուրախանալ, որ գրութիւն ունի լրագրութեան մէջ՝ հայ լեզուն (այս նամարութիւնից ազատելու ջանքը՝ որովհետեւ այս ջերմ ցանկութիւնն և որ պիտի մարքէ մեր լեզուն օտարաբանութիւնից ։ Բա-

ական է աշխատել և ապահով լինիլք որ ժամանակի ընթացքում նա կը հասնի իւր նպատակին. բաւական է վրէժնիլք լինել մեր լեզուի մարքութեանը և խիստ քննադատութեան ենթարկել ամէն մի գործ, լինիլ դա համակրելի թէ անհամակրելի, և կը տեսնենք որ՝ շատով գուրս պիտի գան հասարակական ասպարէզից այն հասգին կոյտ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական գրուածքները, որ ուրիշ ծառայութիւն չեն կարող կատարել՝ եթէ ոչ վնասել ժողովրդին ։

Բայց ցանկով պէտք է յիշենք, որ նոյն աշխատանքը չէ նկատուում նաեւ մեր աշխարհաբար եւրոպական ընդհանուր բառերից մարքելու համար ։ Ռուսաւայտց լրագրութիւնը բեռնաւորուած է այդ բառերի մի այնպիսի բազմութեամբ, որ կարգադրը բնականաբար ընկղմում է տուր մտածողութիւնների կոտանքի մէջ ։ Միթէ այդքան աղքատ է եղել մեր հայ լեզուն, որի բառական կազմութեան հարստութեամբ կարող ենք պարծենալ ամէն մի օտարականի առաջ. միթէ մեր աշխարհաբարը իւր օւնեցած զարգացման ընթացքում դեռ եւս անկարող է հանդիսանում օրինակ մի պարզ նկարագրութիւն աննշու մի թատրոնական ներկայացման. անշուտ ոչ շատ և շատ գրուածքների մէջ մենք կարող ենք առանց մեր կարողութիւնից գուրս ճիւղ անելու՝ փոխանակել այս եւրոպական՝ այսպէս ասած՝ առաջած բառերը մեր հայերէն նոյն գրութիւնն օւնեցող բառերով. բայց մեր լրագրութիւնը վեհանձնաբար կարծես օգուտ է ցոյց տալ իւր անտարբերութիւնը այս խնդրի վերաբերմամբ, առարկելով որ մեր աշխարհաբարը անկարող է դեռեւս այդ պահանջներին բաւարարութիւն տալ ։ Հասկանում ենք որ մեր այժմեան օւնեցած հայերենով անկարող ենք գուրս քշել մեր գրականութիւնից, (մասնաւոր գիտական ճիւղից) եւրոպական բառերի այն ամբողջութիւնը, որ մինչեւ այժմ գործածուում են, և այդ չենք էլ պահանջում առաջադիմութեան սիրոյ համար. բայց ասարկել որ մեր աշխարհաբարը անկարող է նոյն խել մի հրապարակաօտական կամ քննադատական յօդուած գրելու ։ այդ կատարեալ յանցանք է, և նշանակում է՝ որ հայերէն չեն

խմանում, իսկ այս առարկութիւնները միայն իրանց տիրութիւնը ծածկելու միջոցներ են ։ Ըրբեմն պատահում ենք այնպիսի յօդուածների, որտեղ ոչ մի պահանջ չէ զգացուում գործածելու նոյն իսկ մի եւրոպական բան, և որը միջին դասակարգից համարեա ամէն մի անհատ կարող է գրել ամենամաքուր հայերէնով. բայց մեր բարձր դասակարգը կարծես դիտմամբ ցոյց տալու համար իրանց առաւելութիւնը կամ բարձրութիւնը, մէջ է բերում մի այնպիսի կոյտ եւրոպական բաների, որի միջից հազիւ թէ մի լեզուագէտ կարող է դուրս գալ ։

Թողնենք այն՝ որ ժողովուրդը ոչինչ չէ կարողանում հասկանալ այս տեսակ գրուածքներից, որովհետեւ չենք կարծում որ զանաւի մի այնպիսի անհատ, որին կասկածելի թուի այն երեւոյթը, բաւական է միայն ծառայել ինչէլ զաւանների հետ. բայց որ ընդհանրապէս չէ հասկանում նաեւ միջին դասակարգը՝ դա էլ մի աչքի զարկող երեւոյթ է ։ Մենք տեսել ենք թեմական դպրոցների ուսումնական ընթացքը վերջանող շատ երիտասարդներ, որոնք կարգաւով լրագիրները կանգ էին առնում իւրաքանչիւր եւրոպական բառի առջ, մտածելով և պարզապէս խոստովանելով որ չեն հասկանում նոցա նշանակութիւնը ։

Իսկ տանկահայ հասարակութեան մասին և աչ իսկ մտածել հարկաւոր է, այնքան հեռու է մեր լրագրութիւնը նրա հասկացողութեան սահմանից. նոցա մէջ այլ հեռավորութիւնը այնքան մեծ է, որ դժուար թէ մի օր ժամանակի ընթացքում միանալով միմեանց հետ՝ առաջնայային հասարակ գծով, եթէ մէկը իւր կողմից չփոխէր իւր ընթացքի ուղղութիւնը ։ Այս ճշմարիտ է և ոչ ոք չէ կարող մերժել, որ տանկահայ ժողովուրդը շատ աւելի անտարբեր ու արհամարհանքով է նայում գրականութեան վերայ, որ նրա զարգացման աստիճանը շատ աւելի ցած է՝ նորհիւ քաղաքական զժբախտ պայմանների, քան ուստահայ ժողովուրդը. բայց միւս կողմից պէտք է խոստովանել, որ մեր լրագրութիւնը իւր ներկայ դրութեամբ՝ անհարին է որ կարողանայ մտաք գործել տանկահայ ժողովրդի մէջ, արովհետեւ առաւական ազդեցութիւնը բարձրա-

ցած է իրան առաջ որպէս մի բարձր պատենչ, արդիւլելով նորան մի քայլ անդամ տուալ գնալու՝ այն տարբեր միջնուրտի մէջ ։ Իսկ մեր լրագրութեան մէջ գործածած եւրոպական բաները փոփոխած ուսուական լեզուաբանական կանոններով, նոցա մէջ կարող է միայն ծիծաղ առաջ բերել և ուրիշ ոչինչ ։

Մեր ասածից դուրս է գալիս՝ որ ուսումնայոց գրականութիւնը ընդհանրապէս անմտաշելի է ժողովրդի ստորին և նոյն իսկ միջին դասակարգին՝ իւր եւրոպական բառերի չափազանցած փոխառութեան երեւոյթով ։ Ուրեմն ի՞նչ է մնում ժողովրդին, մտտիկ նրա ոգուն, նրա հասկացողութեանը. — վկայիք և հեքեածները միայն, սրոնք գեռ ընդհանրապէս ազատ են այլ ախտից. — բայց միթէ սրանք են որ պիտի կրթեն ժողովուրդը, և հետուացնեն նրա զգացմունքները. միթէ սրանք են՝ որ քուրս պիտի քաշեն ժողովուրդը իւր նահապետական դիրքից, մղելով նրան դէպի դիտնական աշխարհ, դէպի հաստրական բարձր դիրքը ։ Ի՞նչպէս պիտի կարողանանք հասցնել ժողովուրդը զգացմունքներին և հասկացողութեան այն նրբութեանը, որ նա դիտարտէ գրականութիւնը, հաստրական կանոններով և կրթութեամբ, գեղեցիկը, արհեստները, եթէ զրկում ենք նրա հրապարական կախօտական և քննադատական գրուածքներին հասկացողութիւնից՝ մեր բառերի անսեղի փոխառութեամբ ։ Միթէ նա իրաւունք չունի բարձրացնելու իւր ձայնը մեր լեզուի բարեւրտեան խառնակութեան միջից, պահանջելով որ բաւականութիւն տրուի իւր մտաւոր կարիքներին, որ հայ գրականութիւնը իրան մտայնելի պարձուի. և քանի՞ քանի՞ անգամ լսելի են եղել այս բողբոջները. քանի՞ քանի՞ անգամ անհատական փորձեր եղան՝ աղատելու հայ լրագրութիւնը իւր սահմանափակուած շրջանից, և սեփականացնելու ժողովրդին, ընդարձակել նորա գործունէութեան նշանակութիւնը. բայց դժբախտաբար հայ գործողների մեծամասնութիւնը բուրբուլին սասնաւորտ մնաց նոցա ձայնին ։

Սա մի անձնական խնդիր չէ՝ որի մէջ կամակարութիւնը կարողանայ տեղ բռնել. սա հասարակական ընդհանուր հարց է, որ վերջա-

պէս լուրջ ուշադրութեան պէտք է եղծարկել, և ժողովրդեան ձեռքը տալ նորան հասկաւ նայի մի գրականութիւն, որպէս զի կարողանայ իւր գեղը կատարել: Չարմանալի է որ Մշակի պէս լրագիրը ոչ թէ մինչև այժմ էլ իրագործել ընդհանրութեան այս արդարացի ցանկութիւնը, այլ հակառակ մտալով նորա ևուծեանը՝ նա ինքն է որ ամենից շատ է գործածում եւրոպական բառերը նոյն իսկ ամենապարզ նկարագրութիւններէ կամ բացատրութիւններէ ժամանակ: Մշակը իւր հիմնադրութեան սկզբից մինչև մեր օրերը հետադարձութիւն է ժողովրդի կեանքով, ցոյց է տուել գիտակցութեան սզվող ճանապարհը և իւր ամբողջ գործունէութեան ընթացքում երբեք չէ թողել նորան. նա է որ իւր խիստ լեզուով վերջ գրեց հասարակական շատ սպեղ երեւոյթներէ. վերջապէս նա է որ վերջին ուժով հարուածը տալով զբարբախն՝ նրա տեղ հաստատեց աշխարհագր գործածական լեզուն՝ կեանքի նոր պահանջներէ համեմատ: Միթէ այժմ ցանկալի չէր լինի՝ որ նոյն Մշակը աչքի առաջ ունենալով ժողովրդի պահանջները, ժամանակը, վերջապէս այն լեզուի մաքրութիւնը՝ որի գորդացման համար այնքան աշխատել է ինքը, վերցնէր այդ սզվող երեւոյթը լրագրութեան միջից, և յարմարուելով ժամանակի հետ՝ աշխատէր ժողովրդականացնել աշխարհաբարը, հետեւաբար նաեւ գրականութիւնը. չէ՞ որ մի բան որ կարելի է անել մի որոշ ժամանակ, և որ այս ոչ պէտք ունի յոյն իսկ օղտակար համարեցիքը, չէ կարելի շարունակել՝ երբ հիմնապէս փոփոխուել են նրան առաջացնող պայմանները: Միթէ ուրիշ պայմանների մէջ կարելի է իրագործել այն համակերպի գաղափարը, որ Մշակ տարիների ընթացքում փայտայել է, այսինքն եկեղեցական արտօրոգութիւնների աշխարհաբար և ժողովրդական հասկանալի լեզուով կատարելը, եթէ ոչ նրա մաքրութեամբ և զարգացմամբ: Այս հարցերը կարելի է անվերջ կերպով շարունակել զամազան հանգամանքների համեմատ և միշտ մի և նոյն պատասխանի տալ, որ ժամանակ եւ աշխատիչ թօթափելու համար մեր լեզուի վերայից օտարներէջ վերցրած

ժանրութիւնը և Չունազան եւրոպական լեզունքը մեզ համար օրինակ չեն կարող ծառայել այս խնդրի վերաբերմամբ, որովհետեւ մեր հայկական լեզուն շատ հին լինելով, նրա բառական կազմութիւնը բարորոյի տարբեր է նոցանից. այն ինչ նոքա գրականութեան մէջ զանազան պարագաներում ստիպուած են գիտել յոյն և լատին լեզուներէ օգնութեանը, մեր լեզուի բառական կազմութիւնը մեզ թող է տալիս ձեւակերպչու աճելու բառ, միայն թէ մշակութեան և գործածութեան անհրաժեշտ պայմաններով. որովհետեւ մինչև որ մի բան չորքան էլ հօլզէ մշակուած լինի լեզուաբանական կանոններով, գործածութեան չենթարկուի, մեր գիտակցութեան մէջ իւր բուն նշանակութիւնը չի արտայայտեր: Մինչ ունինք շատ բառեր, որ իրանց գեղեցիկ կազմութեան հետ կարողանում են արտայայտել նաեւ կատարելապէս մեր ցանկացած միտքը, բայց անգործութեան մէջ թաղուած լինելով՝ մեզ օտարոտի են թուում. բայց բառական է որ անցնի գործածութեան բովից, և մեր ազգի առաջ այն ինչ որ խորթ էր թուում՝ կը բռնէ իւր սեփական տեղը: Մինչ չենք ասում որ այս բոլոր մի վայրկեանի խնդիր և և անա մեր լեզուն ստացած կը լինի իւր ինքնուրոյնութիւնը. ո՛չ, զա ժամանակի խնդիր է. այժմ բառական է միայն աշխատիչ, լուրջ ուշադրութիւն գարծնել գրաւորների վերայ, որպէս զի կարելի եղաւ ծին շափ մաքուր հայերէն լինի, և կը տեսնենք որ շատ կարճ ժամանակում մաքրած կը լինինք աշխարհաբարը:

Իսկ զայլով ուստահայց աշխարհաբարի բնականական մասին, պէտք է խոստովանել որ շատ թոյլ է. մինչև այսօր չկարողացանք ունենալ մի կանոնաւոր աշխարհաբար լեզուի քերականութիւնը, որ անցնելով հայ ասանոց երիտասարդութեան ձեռքը, վերջ գնէր այն ասակալի անիշխանութեանը որ տիրապետում է մեր գրականական լեզուի մէջ և կարծես ամէն մի գրող ունի իւր առանձին քերականութիւնը, իւր սեփական լեզուաբանական կանոնները: Մի տեղ տեսնում ենք որ մէկը՝ օրինակ՝ ուղղագրութեան մէջ հետեւում է մի որոշ ուղղութեան, միւս տեղ տեսնում

ենք որ մի ուրիշը ընթանում է նրա բոլորովին հակառակ ուղղութեամբ, իսկ մի ուրիշ անեղ մի երբորդ անձնուարթութեն այս երկուսից մէկը կամ չափազանցութեան է հասցնում կամ ոչ մէկն էլ չէ ընդունում, և ույ՛ն. այն պէս որ երիտասարդութիւնը շինթուած մտում է այս հագար անսակ կարծիքների առջև, չկարողանալով որոշել որը գերադասել: Մի ուսուցիչ՝ օրինակ՝ դպրոցում առաջ է մղում իւր կարծիքը, բայց միւս տարի՝ ուսուցչի փոխուելու հետ՝ օտարութեմ է փոխել իւր գրութեան եղանակը նաեւ աշակերտը, մինչեւ որ վերջապէս ազատելով դպրոցական գրասեղանից կամ հետեւում է մի որոշ ուղղութեան, կամ չհասկանալով ոչ մէկի նշանակութիւնը, քամու ընթացքի հետ փոփոխում է նաեւ իւր գրութեանը ձևը:

Այս այս է որ նշմարում է մեր ամբողջ գրականութեան մէջ քերականութեան վերաբերմամբ. այստեղ գոյութիւն ունին այնքան կարծիքներ թէ՛ ուղղագրութեան և թէ՛ միւս քերականական ճիւղերի մէջ, որքան որ գրողներ կան: Ուրեմն շատ հասկանալի է թէ ինչո՞ւ համար մինչեւ այժմ չենք ունեցել մի կանոնաւոր աշխարհաբար լեզուի քերականութիւն, այն ինչ գրարարի քերականութիւն ամէն անեղ կանոնաւոր կերպով հրատարակուած և աւանդուած են դպրոցներում: Բայց այս չէ նշանակում բոլորովին որ մեր լեզուն յետ է մնացել այս մասի մէջ. սլ որ համբերութեամբ հետեւել է մեր գրականական լեզուի դարգացմանը, անշուշտ դժուարութիւն քաշած չի լինի նկատելու այն առաջադիմութիւնը որ արել ենք նաեւ քերականութեան մէջ: Մեր աշխարհաբարի քերականութիւնը իւր սկզբնաղբութեան մէջ և մեր այժմեան գրականութեան մէջ որ այնպիսի տարբերութիւն է կրել, որ սպասուվալար կարող ենք սպասել մի մտախի սպասողայի, երբ մեր նորարդողը լեզուն կը սկսի ընթանալ լեզուաբանական հաստատուն օբեկտների հիմանց վերայ, և անհեռալով մի կանոնաւոր քերականութիւն, հայ ուսանող երիտասարդութիւնը չի կրէ այն փոտարութիւնները իւր ուսումնական ընթացքի մէջ, ինչ որ տեսնում է այժմ:

Այսպէս ուրեմն առանկայաց գրականական լեզուն ներկայումս գտնուում է այնպիսի պարագաների մէջ, որ պէտք է ցանկալ իւր ապագայ առաջադիմութեանը: Առ այժմ ինչպէս ասացիք չէ կարող իւր ամբողջութեամբ կատարելապէս անուանել, որովհետեւ օտար լեզուի ազդեցութեան պատճառով նա՛ չունի դեռ եւս սպասած ժողովրդականութիւնը և կազմակերպուած չէ քերականական հաստատուն կանոններով. բայց թէ կարելի է յուսալ որ մի օր նա հասնի իւր դարգացման այն աստիճանին՝ որ կարողանայ կառուիլ մասնաւորական մաքուր և կտտարել լեզուն, այդ մենք հաւատում ենք և սպասում ամենայն ապահովութեամբ, քանի որ ունիւր մի եւս առաջուն և երիտասարդ ուսումնական ոյժ:

S. Մ.



ԻՄ ԶԱՆԱԳԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ա Ր Ս Վ Կ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

(Շար, տես էջ 180)

Բ

Ձ ՈՒՆԱՅԱՑԵՐ Մ ԻՆՉԵՒՆ Ի Ռ Ց

ԲԱՑՑ այդ միջոցին մի ահագին ազաղակ մեր ականջը խլացրեց. «Վայ, բեծակ էլ չլին՝ Ալլաշըն էշկրնայ» (վայ, օգնեցէք Աստուծու սիրուն). Իսկոյն մեր աչքի առաջ պատկերացաւ մի սոսկալի տեսարան: Մի քանի ֆերաշներ բռնած մի պարսիկ համալի օձիքից՝ անզուժ կերպով, ձեռք ու ատրք կապկապած, և քաշըշում էին և՛ գանակուծում և՛ ֆլախկում: . . .

— «Վուրըն, աւաղար, օլդուրըն, ման ջուզարաւար ամ» (խիեցէ՛ք, սղիքը, սպանեցէ՛ք, ես պատասխանատու եմ): Այսպէս